

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն

Թիֆլիսի առևտրական գազեր:

Հրատարակում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչև Յունիսը քաղաքում 2 ման. 50 կոպ., դուրսը 3 մանկ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ
(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գաղթին ստորագրվել կարելի է խմբագրողի մոտ:
Գաղթի մը հրատարակելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է խմբագրականը:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ:

Տէրութենի կարգադրութիւնները: Կովկասեան արքունական Պալատից: Ծառայողներին փոփոխութիւնները: Տորգեր և արիւշ յայտարարութիւններ: Բանկերի նշանակութիւնը: Ռոսաց նոր դատաստանատները: Չանապան տեղեկութիւններ: Առևտրական տեղեկութիւններ: Մասնաւոր յայտարարութիւններ:

ԽՄԲԱԳԱՏԱՆԻՅ:

«Ա աճառականի» խմբագրութունը յայտնում է, որ էս տարի յուլիսի 1-ից սկսած, բացի 10 ամսով ստորագրվելը, ընդունում է նմանապէս և 6 ամսով ստորագրութիւն մինչև դեկտեմբերի վերջը: Էդ վեց ամսի համար գինը նշանակվում է Թիֆլիսում 1 մ. 50 կ. յիսկ քաղաքիցը դուրսը 2 մ.

Դեռ էլի շարունակվում է «Ա աճառականի» համար ստորագրութիւնը առաջին №-ից էս գաղթի ճակատումը յայտնած գներով:

վրայ և մանրադրամաթղթերը մեծադրամաթղթերի վրայ, բացի հիմի յուլիսից սկսած էդ դործերը կկատարէ Թիֆլիսի Թագաւորական բանկի բաժանումը, վասն որոյ իմաց է անվում էս բանը թէ արքունական դատաստանատներին և թէ մասնաւոր մարդկանց:

ՇԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՓՈՓՈՒՄԻԹԻՆՆԵՐԸ:

Ելխավանդութիւն նախագական դատարանի առևտրական, տնտեսական սովետիկ ԼԱՋԱՐԵՆՅԱՆ նշանակվեցաւ մի և նոյն դատարանում անդամ էս տարվան յուլիսի 3-ից: Հեծեղադոր գնդումը գտնված, պորուչիկ ՄԵԼԻՔ-ԱՌԱՔԵԼԵԱՆՅԱՆ նշանակվեցաւ մի և նոյն թէին Նախիջևանի նախնադի քաղաքական պահապանների գլխաւոր հրամանատար:

Կովկասի փոխարքայի գլխաւոր կառավարութենի Թագաւորական կայքերի դեպարտամենտումը անպաշտօն ծառայող, կոլեկտիկ սեկրետար ՍԱՐԳՍԵԱՆՅԱՆ նշանակվեցաւ նոյն թէից մի և նոյն դեպարտամենտումը կրտսեր սեղանապետի պաշտօնակատար:

Պետերգորսկի 151-դ հետևակազոր դնդի պրապորչիկ ՇԱՀՆԱՋԱՐԵԱՆՅԱՆ նշանակվեցաւ Մինդրեկեան զրեհագերեան Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ իշխան Գլխորդի Կանստանդինովիչի զօրագնդումը:

ՏՈՐԳԵՐ ԵՒ ՈՒՐԻՇ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

Թագաւորական կայքերի դեպարտամենտումը էս տարի սեպտեմբերի 5-ին նշանակված է Թիֆլիսումը միս ծախողների կարգումը գտնված եկեղեցական 11 դուքանի 1867 թի յունվարի 1-ից իջարով տալու տորդը:

Մի և նոյն տեղումը սեպտեմբերի 5-ին նշանակված է Գորու նախնադի Գլխատողի անունով գիւղումը գտնված 516 դեսեստինա և 425 շաթեն չմշակված և 58 դեսեստինա և 1150 սաթեն մշակված եկեղեցական դետնի 1867 թի յունվարի 1-ից իջարով տալու տորդը:

Երևանի գաւառական կառավարութենումը սեպտեմբերի 28-ին նշանակված է զօրքի համար սէլեր պատրաստելու և Կովկասեան Լինեյնի № 22 բառալիօնի հիւանդանոցի Երևանից Գանաքեռ գիւղը տանելու և Էստեղից յեռ էլի Երևան վերադարձնելու տորդը:

Թիֆլիսի գաւառական կառավարութենումը սեպտեմբերի 27-ին նշանակված է ազնական Զիմչեր Ասլամաղեանցի Թիֆլիսի 1 մասումը և 1 և 2 կվարտաններումը գրտնված և 5300 մ. գին դրած երկու յարկանոց ջաղաղաւոր տան ծախելու տորդը:

Մի և նոյն տեղը սեպտեմբերի 22-ին նշանակված է Թէլաւի բնակիչ Սափար և Փրիդոն Սափարեանցիների Թէլաւ քաղաքումը գտնված 1600 մ. գին դրած երկու յարկանոց քարաշէն տան և երեք դուքանների ծախելու տորդը:

Բաքուի գաւառական կառավարութենումը էս տարի հոկտեմբերի 3-ին նշանակված է հանգուցեալ Շուշլայ բնակիչ Մարգար Գրիգորեանցի որդի՝ Աղաջան և Լուգովիկոս Գրիգորեանցիների Շուշլի քաղաքումը գտնված, 8000 մ. գին դրած 15 քարաշէն դուքանների ծախելու տորդը:

Թ Ի Յ Լ Ի Ս

Օգոստոսի 6-1866.

Եւսիբարին ուժ տվողը, պահպանողը մեր օրերումը քան կ եր ն: Հին ժամանակներումն էլ մինչև անգամ դառափները իրանց

ՏԵՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

Կովկասեան արքունական (կադետների) սլաւատից: Կովկասեան արքունական սլաւատը յայտնում է, որ մինչև հիմի Թիֆլիսի նախնադական դանձատունն էր փոխում հնազադ դրամաթղթերը նորերի վրայ, մեծադրամաթղթերը մանրադրամաթղթերի

սեղանները վրայ նստած զանազան երկիր-ները փողերը առնում, ծախում և փոխում էին: Մէկ քանի ժամանակից յետոյ էդ դա-րաֆները սկսեցին նշանաւոր դրամներ առ-նելով, իրանց փողը շահով տալ: Եդուր հա-մար դրանք ուրիշներից էլ փող էին վեր առ-նում և շահով տալիս, ի հարկէ մէջը օգուտ քաղելով: Մեր ժամանակի բանկի տէրերը և զառաֆներն էլ մի և նոյնն են անում:

Ամեն տէրութիւնների մէջ հիմի փողը կրտ-րում են թղթից, ոսկուց ու արծաթից: Եդ բանը տեղիք է տալիս զառաֆներին ոչ մի-այն փողի խուրդայ անելով պարագել, այլ և մէկ աւելի օգտաւէտ գործով, այս ինքն արհեստական կերպով ցածացնել որ և իցէ փողի (ոսկու, արծաթի կամ դրամաթղթի) գները ու ցած գներով առնելուց յետոյ, բարձր-ացնել գները և թանկ ծախել: Ի հարկէ էդ-պիսի արհեստական ձևերը զառաֆներին մի-ջոց են տալիս փողոցի մէջ նշանաւոր դեր խաղալու և մեծ վնաս են տալիս առու-տուրին:

Ոսկու և արծաթի գործածութենի անցար-մարութիւնը և անօգուտ լինելը առուտուրի մէջ վաղուց հկատել էին արդէն միջին դա-րումը: Ոսկէ փողերի տեսակ տեսակ լինելը, նրանց գների շուտ շուտ վեր ընկնելը, զա-ռաֆների արած խաբեբայութիւնները և այլն — էս բոլորը ստիպեց էն ժամանակիս վա-ճառականներին հնարք գտնել էդ անկարգ-ութիւններին վերջ տալու և էդ հնարքն էր դեպ օգիտի (դրամաթղթ երի) բանկ երի սահմանելը: Առաջին էդպիսի բանը բացվեցաւ Վենետիկումը 12-րորդ դարումը, յետոյ Բարսելոնումը, Ֆլորենսիայու-մը, Լինուայումը, Ամստերդամումը, Համբուր-գումը, Բոտերդամումը և շատ ուրիշ մեծ քաղաքներումը: Վաճառականները իրանց փողերը դնում են բանկումը և յանձնում են բանկիրին (կառավարին), որ նա էն փո-ղերից վճարէ իրանց վեկսիլի կամ ձեռա-ցաղրի ներկայացնողին: Բանկիրն էլ էդ փո-ղատէրերի մէջ էլած հաշիւները դրստում է և վերջացնում է միայն իր ելումտի գրքի մէջ մէկի հաշիւից միւսի հաշիւը անցկացնելով նշանակած փողը, առանց նոյն իսկ փողին ձեռը տալու: Եդպիսով ահա վաճառական-ները միմեանց վրայ ապրանք են ծախում, կամ առնում և ուղարկում են բանկը իրանց ձեռացաղրները կամ վերսիլները վճարելու համար, որ և ոսկւով ու արծաթով միմեանց վճարելու փոխանակ, իրանց հաշիւների մէջն է նշանակում: Գուրս է դալիս, որ բոլոր հաշիւ-ները թէ պարտքի վճարելու և թէ տալունը լի-նում է միմիայն հաշաղթների մէջ: Եդտեղից

ծագեց վեկսիլի մեծ գործածութիւնը և նշա-նակութիւնը, որ ժամանակով դա պէտք է ոսկուն ու արծաթին դուրս հանէ գործածու-թենից: Վեկսիլի նշանակութենի վրայ մենք արդէն խօսել ենք:

Բանկերի նշանակութիւնն է, ինչպէս պըն-դում է և խաճակ Պարէյըրը, որքան կարելի է հեշտացնել առուտուրը և միջոց տալ ա-ռանց փողի եօլլա դնալու:

Վեկսիլների շատանալը, դրանց տված օ-գուտը և առուտուրի մէջ օրէցօր աւելանող հարկաւորութիւնը բանկիրներին առիթ տը-վեցին մտածելու, որ թուղթը կարողանայ բոլորովին փողի տեղը բռնէ և փողը բոլո-րովին գործածութենից դուրս հանվի: Առու-տուրը վաճառականների մէջ ըստ մեծի մա-սին առանց փողի է լինում. փողի տեղ վա-ճառականները տալիս են միմեանց վեկսիլ-ներ, որոնք փողի չափ նշանակութիւն և դին ունին: Բայց էդ միայն առուտուր անող-ների մէջ: Մասնաւոր մարդկանց տված վեկ-սիլները միմիայն էն ժամանակն են ստա-նում կատարեալ նշանակութիւն և էհալբար, երբ որ էդ վեկսիլի վրայ շատերն ունին ստո-րագրած էն մղքով, որ թէ տվողը չվճարէ իր ժամանակին, իրանք վճարեն: Ուրեմն եթէ գտնել էնպիսի հնարք, որ բոլոր օրինաւոր վեկսիլները հասարակութենի մէջ փողի տեղ դուրս դնային, էն ժամանակը ոսկին ու ար-ծաթը գործածութենից կհանվէին: Եդ հը-նարքի գտնելը դժուար չէ. հարկաւոր է է-դուր համար մասնաւոր, անուանի, ժամա-նակ ունեցող վեկսիլը չինել անանուն, ան-ժամանակ և էն պայմանով, որ էդ վեկսիլի ամեն ներկայացնողը ամեն ժամանակ կա-րողանայ ինչպէս իր ցանկութիւն է խուրդայ անել (փոխել) ոսկու և արծաթի վրայ: Ի հարկէ կատարած չկայ, որ էդ խուրդայ անողը պէտք է լինի էն բանկը, որը որ տոմակ-ներ է դուրս տվել — ն երկայացնողի վրայ և ն երկայացնողի ետոյ: Եդ փողերի փոխելու համար ի հարկէ բանկը կունենայ իր գումարը, ուրիշների պահոված փողերը, մասնաւոր վեկսիլները և ուրիշ ժա-մանակ ունեցող ստորագրութիւնները, որը որ ընդունել է բանկը, տեղը փող դուրս տալով:

Տնտեսական գործունէութենի առաջին և զլխաւոր պայմանն է փոխու տուրսը կամ առ և տուրը: Ի հարկէ էս բառե-րը պէտք է հասկանանք էստեղ ոչ իբրեւ վա-ճառականների միմիայն արհեստ, այլ իբրեւ ամենքիս համար պարագամունք: Մենք ա-մենքս առնում ենք ու ծախում, ամենքս միմեանց մեր ծառայութիւններն ենք առա-ջարկում և փոխում ենք մեր աշխատանք-

ների պտուղները: Կարճ ասենք ամենքս առու-տուր ենք անում: Առանց տուր և առի կամ փոխ ու տուրսի մենք ոչ կարող ենք ապրել, ոչ յառաջանալ: Բայց ընտանի տուր և առ, այսինքն սպրանքը սպրանքի վրայ փոխելը, մեզ համար շատ դժուար է, մինչև անգամ անկարելի, վասն որոյ մենք էդ նպատակով գործ ենք անում փողը, որովոր հեշտ կա-րելի է առնել ամեն բան: Բայց մեր առու-տուրը, մեր վաճառականութիւնը հիմի էնքան տեղը ընդարձակվել է, մենք էնքան շատ զանազան տեսակ գործեր ենք սկսում, որ փողն էլ մեզ բաւականութիւն չէ կարող-անում տալ, կամ իր նշանակութիւնը կա-տարել, այսինքն թէ փողի հարկաւորութիւնը աւելի շատ է, քան թէ էլած փողը: Եդ դու-թենի մէջ ահա սպրանքի նաղդի առնին ու ծախելը անկարելի է դառնում. մենք էդ պատճառով ստիպված ենք առուտուր անել միմեանց հետ ն ի ս ի ա յ, գործ դնելով փո-ղի տեղ է հ տ ի բ ա ը: Միմիայն փողի պա-կասութիւնը ծնեցրուց է հ տ ի բ ա ը: Եւ-ստիբարը հին ժամանակներումը կնշանակէր փողի շահով տալը: Մեր ժամանակներումը էդ նշանակութիւնը չի կարող ունենալ: Եւստիբարը, իբրեւ փողի պակասութենի հետ-նանք, փողի մեծ նշանակութենի ուղղակի և անպայման հերքող գործիքն է: Ուրեմն երբ որ մեզանումը սաստիկ փողի պակասութիւն կլինի, երբ որ փողը բոլորովին կանհետանայ և մենք աչքով էլ փող չենք տեսնիլ, այլ մի-այն աւանդութենով միմեանքս կբերենք փողը — էն ժամանակը կլինի էստիբարի թաղաւոր-ութիւնը, էն ժամանակը դէպի միմեանց կու-նենանք մեծ հաւատ և միմեանց համար պա-տասխանատվութիւն — էդ ժամանակը հասա-րակութիւնը կկանգնի էն ուղիղ և լին ճանա-պարհի վրայ, որը որ պէտք է տանէ դրան դէ-պի նիւթական բաղդաւորութիւնը և յառա-ջադիմութիւնը: Ուրեմն երբոր մենք ասում ենք, մեզ հարկաւոր է էստիբար — էդ կնշա-նակէ թէ մեզ հարկաւոր չէ փողը: Երբ որ հա-սարակութիւնը զանգատվում է, թէ փող չկայ, կնշանակէ թէ հասարակութիւնը իր կեանքի ամենալաւ օրերումն է, իր կատա-րեալ յառաջադիմութենի ժամանակումն է:

Մինչև բանկերի ծագելը էստիբար (կրէզիտ) բառը կնշանակէր դէպի որեիցէ պարտն հաւատ չունենալը: Պարտք տվողը ահա-զին շահով էր տալիս իր փողերը և պարտք առնողին իր համար գերի էր չլինում: Որ-քան շատ էր լինում փողի հարկաւորու-թիւնը, էնքան դժուար էր մօտ գնալ պարտք տվողի մօտ, էնքան աւելի պակասում էր

որա ունեցած հաւատը գէպի իր պարտք-
վերառնողները: Էն ժամանակը փող տվողը
աւելացնում էր շահը, կարճացնում էր ժամա-
նակը, պահանջում էր աւելի հաստատ գրաւ-
ներ (ապահովութիւն), մէկ խօսքով ամեն
կերպ աշխատում էր ոչնչացնել է հաւի-
ր արը: Փողը բոլոր առուարների և վաճառա-
կանութենի կառավարողը լինելով մեծ ազ-
դեցութիւն ունի ազգերի քաղաքական, բա-
րոյական և անտեսական վիճակի վրայ: **XVIII** դարի վերջերից գէտը փողերը սկսեցին
ժողովել բանկերում: Ֆրանսիացի հրէայ
բանկիր Խառնակ Պարէյրն, ինչպէս վերին
էլ յիշեցնիք, ասել է թէ, բանկերի նպատա-
կըն է փողը (սակին ու արծաթը) դուրս հա-
նել բոլորովին դործածութիւնից: Եւ միտ-
քը հաստատուում է փաստերով: Ճշմարիտ որ
ամեն բանի իր դործերն առաջ տանելու հետ
միասին, միշտ աշխատում է ժողովել իր սըն-
դուկներումը դրսից ուրիշների դումարները
և էդպիսով դուրս է հանում փողը դործ-
ածութիւնից: Նրանքի պատմարան և անտես
Սիմանդ դէ Սիմանդին ասաւ, բանկիրը
(զառափը) փողերը ժողովելով, զգում է որ
ժողովում է իր սնդուկներումը ուժ և իշխա-
նութիւն, :

Բայց եթէ բանկերը ժողովում են բոլոր
ոսկին ու արծաթը, ինչ են տալիս փոխարէ-
նը, չէ որ ոսկու տէրերը ձրի չեն տալ իրանց
փողերը բանկերին: Բանկերը ոսկին ու ար-
ծաթը մասնաւոր մարդկանցից առնելով
տեղը տալիսն թ ղ թ ա դ ր ա մ ն ե ր : Ինչի,
միթէ թուղթը կարող է փողի տեղը բռնել:
Անդիլացի հրէայ, բանկիր և անտես Գաւիթ
Քիկարդոն ասաց Վիուղթը փողի կատարե-
լագործված պատկերն է:

Խառնակ Պարէյրն ասաց, թուղթը փողի
տեղը պէտքէ բռնէ, էդ բանը անտեսական
յառաջադիմութենի հետեանքն է, :

Ահա երկու երեւելի մարդկանց կարծիք-
ները, որոնք իհարկէ լաւ էին համկանում
իրանց ասածը: Մինչև անգամ երեւելի Անդիլ-
ացի Ադամ Սմիտը ասաց, թուղթը դործ է
ածվում ոսկու և արծաթի տեղ էն մտքով, որ
առուարների էդ թանկ գործիքները (ոսկին
ու արծաթը) փոխել ու տեղը գործ դնել աւե-
լի ածանր և նոյնքան էլ յարմարութիւն ու-
նեցողը: Իսկ թուղթը աւելի մեծ յարմարու-
թիւններ ու արժանաւորութիւն ունէ, քան
թէ ոսկին, որովհետեւ 1) թղթադրամի համ-
ընը և մանածելը, վերջապէս պահելը աւե-
լի հեշտ է, քան թէ ոսկունը: 2) թղթադրամի
կարելի աւելի հեշտ է, քան թէ ոսկունը, որի
հանքերից հանելը շատ թանկ է նստում և

վերջապէս 3) թղթադրամի պակասութիւն
երբեք չի կարող լինիլ և թղթադրամ ու-
ղ ո ղ ն ե ր ը ո ր ք ա ն աւելանան, էն-
ք ա ն է Լ կ ա ր ե Լ ի է ն ր ա ն աւելաց-
ն ե Լ, :

Ա. Ե.

ՌՈՒՍԱՅ ՆՈՐ ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԿԱ-
ՆՈՆՆԵՐԸ:

«Վաճառականի» անցեալ նումերումը մենք
հրատարակել էինք բարձրագոյն հաստատ-
ված 1865 թւի հոկտեմբերի 11-ի դատաս-
տանական նոր կանոնների կողմնադրու-
մի մէջ դործ դնելը միայն մէկ քանի փո-
փոխութիւններով դեռ առ ժամանակ:

Թէ ինչ զանազանութիւն կայ ուռուաց հին
և նոր դատաստանական կանոնների մէջ,
էդ բանը լաւ կարելի է իմանալ առաջ բե-
րելով էն բարի հետեանքները, որն որ ունե-
ցել է Ռուսաստանի 10 գաւառներում, որտեղ
որ էս տարի մայիսի 17-ից գործ դրվեցան
էն կանոնները:

Նոր դատաստանական կանոնները, այս
ինքն 1864 թւի նոյեմբերի 20-ին և 1865
թւի հոկտեմբերի 11-ին հաստատված դա-
տաստանական նորաձև օրէնքները բոլորո-
վին զանազանում են հին դատաստանա-
կան օրէնքներից: Գլխաւոր զանազանու-
թիւնը և էդ նոր կանոնների ամենամեծ ար-
ժանաւորութիւնն էն է, որ նոր դատարան-
ներումը գործերը ծածուկ չեն կատարվում,
այլ յայտնի կերպով և մինչև անգամ էնտեղի
գործերի վիճիւնները հրատարակվում են ժուր-
նալներումը և զազեթներումը: Ամեն մաս-
նաւոր մարդ իրաւունք ունի մանկու դա-
տաստանատուն գործի քննելիս և պահա-
տես լինիլ բոլոր բաներին, որ խօսվում են և
անվում են էնտեղ:

Նմանապէս նոր կանոնների ամենամեծ
արժանաւորութիւնը համարվում է փոխանակ
վաղուցվան պէս դատաստանատանը թղթով
խօսելու և բոլորովին էլ դատաստանատուն
չգնալու, երկու դանդաղաւորի երես երես
խօսելը, վիճելը և գործի բացատրելը: Ի՞նչ
կուղէ սառը խղճմտանքով մարդ լինի, բայց
երբ որ հրապարակով դատաւորների և 30,40
հանդիսականների առաջ կամենում է իր ա-
նուղիղ գործը պաշտպանել—չի կարող եր-
կար շարունակել իր սառնարարութիւնը,
խղճմտանքը կյաղթէ նրան: Շատ անգամ
պատահել է, ինչպէս պատմում են Պետեր-
բուրգի ուռուերէն զազեթները, որ նոր դա-
տարաններումը զանազատաւոր անուղիղ գոր-
ծի պաշտպանելիս խառնվում է էլէլ և յեա

մտիկտալով էն սենեակումը նստոտած հաւ-
դիսականներին, բոլորովին չիթիվում է էլէլ,
կամ իր անուղիղ զանգատիցը ձեռն է վեր
առել և կամ իր հակառակորդի օրինաւոր
պահանջմունքը վիղն է առել, տեսնելով որ
հանդիսականները նրան թշնամական կեր-
պով են մտիկ տվել և անբաւական գէմքով
խօսումն են էլէլ միմեանց ականջումը նրա վը-
րայ: Շատ անգամ անպատուութենի պատ-
ճառով զանազաններումը զանազատաւորը ներել
է իր հակառակորդին բոլորովին անծանօթ
մարդկանց խնդրելով, որոնք տեսնելով մեղ-
ադրածի լիակատար զղջալը, չեն կարողա-
ցել չխառնվել դործումը և հաշտեցնել մի-
մեանց հետ:

Էս նոր դատարաններումը կատարված դա-
տաստանները խղճմտանքի դատաստաններ
են և նոր կանոնների էդ պայծառ կողմը
շատ լաւ զգում են էն մարդիկը, որոնք ան-
ուղիղ և կասկածաւոր զանազաններ էին սո-
վոր սկսելու հին դատաստանատաներումը և
գործի բուն անիրաւացութիւնը ծածկում էին
զանազան արտաքին ձևերով և էդպիսով
զարդարված անիրաւութիւնը երբեմն կա-
րողանում էին իրաւունք և յաղթութիւնը ըս-
տանալ:

Կարծիք չկայ, որ էս նոր դատարաննե-
րումը գործերը կատարվում են շատ շուտ,
քան թէ վաղուցվան դատարաններումը, որով-
հետեւ հիմի բերանացի և երես երես են դատ-
վում զանազատաւորները: Մայիսի 17-ից ըս-
կաված մինչև յունիսի 17-ը, այս ինքն մէկ
ամսվայ մէջը բոլոր նոր բաց արած դատա-
րաններումը 8,677 գործ է սկսվել, որոն-
ցից վճռված է և վերջապահ 5,784 գործ,
մնում է 2,893 գործ, որոնք չեն վճռվել կամ
որովհետեւ դեռ նրանց քննելու նշանակված
ժամանակը չէ հասել և կամ բոլոր տեղեկու-
թիւնները, որ հարկաւոր են գործի պարզեց-
նելու համար չեն ժողոված: Ինչպէս պատ-
մում են Պետերբուրգի զազեթները էդ դա-
տարաններումը գործերը հիմի շատ և շատ
բազմացել են: Ամեն մէկ չնչին գործի հա-
մար էլ դնում են դատաստանատուն, որով-
հետեւ դիտեն որ շուտ և օրինաւոր կերպով
պէտք է վճռվի նրանց գործը և պարտու-
պատշաճ բաւականութիւն տաւան:

Գործերի էդպէս շուտ և իրաւացի կերպով
վճռվելով անիրաւ և իր պարտքի չկատարող
մարդը շուտ էլ պատժվում է: Վաղուցվան
ժամանակներումը փողի պարտականը կա-
րող էր մէկ անտեղի պատճառ յայտնելով
գործը երկարացնել քննվում էր գործը ա-
ռաջ ստորին դատարանումը, յետոյ երկրոր-
դումը և յետոյ երրորդումը, շատ տարիներ

էր քաջում բանը և շատ անգամ պատահել է, որ գործի վճռին հասել են կամ դանդաղ տալիս որդիքը և կամ երբեմն նրանց թողնելը: Բայց հիմի, էս նոր դատարաններում որ շատ շատ կարելի լինի երկարացնել ամենամեծ և խառնափնտր բանը—մէկ տարի, բայց առհասարակ գործերը վճռվում են 1, 2 և շատ շատ 3 անգամ խօսեցնելով դանդաղաբերներին դատարանում: Պարզ բան է, որ էսպիսով ժողովուրդի միմեանց վրայ ունեցած հաւատը, էհտիրարը կշտտանայ և կմեծանայ օրէցօր: Պարտական ես փող, դատարանը չուտով կարգադրութիւն է անում առնել քաղաքից քո պարտաւորիչ հասնելու փողը: Կծռուես դործը, կխառնես փողի չտալու կամ ուշացնելու մտքով, դու ինքդ կխայտաւակիւս: Հիմի ամեն տեսակ օրինաւոր պարտաւորիչների դէմ էլ ոչ մէկ սուտ բացատրութիւն և խօսամանկութիւն անկարելի է: Հիմի էհտիրարը կշտտանայ ի հարկէ, որովհետեւ դիմեն որ փողը ոչով չի կարող ուտել և փող ուտողներն էլ տեսնելով, որ իրանց դրութիւնը շատ նեղ և դժուար է, անկարելի է որ ժամանակով քիչ քիչ չուզովն:

Առաջին ժամանակներումը դատարաններում գործի վճռելիս միայն պահանջվում էր մեղադրածից զանգատի դումարի ապահովութիւն և էն էլ ամեն ժամանակ չէր անվում: Բայց հիմի գործը սկսեցիր թէ չէ, քո զանգատի դումարը ապահովացնում է դատարանը զիմացի մարդուց ապահովութիւն պահանջելով: Օգտւար յայտնի է: Ի՞նչ անեմ էն վճիռը, երբ որ հակառակորդս գործի կարելուց օգուտ քաղելով թաղցնէ իր ունեցած չունեցածը և ինձ ոչինչ բաւականութիւն չտայ:

Որ բոլորը պատահանք, անվերջ պատմութիւն կդուրս գայ, էնպէս շատ են նոր դատաստանական կանոնների բարի հետեանքները: Խալէս կարճ միջոցումը (ընդամենը էս մայիսի 17-ից հաշուեցէք մինչև հիմի քանի ժամանակ է անցկացել) էսքան երեւի և պայծառ հետեանքներ—չատ միթիւրական բան է Ռուսաստանի բոլոր ընտկիչների համար, որտեղ գործ են դրվել և գործ են դնվելու էդ նոր դատաստանական կանոնները:

Հարկաւոր ենք համարում յիշել էստեղ և էն բանը, որ էս գործի արժանաւորութիւնը յաւերժացնելու և աւելի պատվելու, էս տարի նոր առանձին մեղադիր է ձուլել ուսաց տէրութիւնը դատաստանական վերանորոգութենի յիշատակի համար և բաժանում է էն մարդկանց, որոնք թէ գործով և թէ

խօսքով աշխատել են էս գործի առաջ տանելու համար:

ՁԱՆԱԶԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Կովկասից Պարսկաստան և Եւրոպայ տրանզիտով դուրս տալու ապրանքները 1865 և 1866 թւերին:

1865 թւին Կովկասից տրանզիտով դուրս է տարած զանազան ապրանքներ Պարսկաստան 20,802 հակ, որի բրուտո (ապրանքը և փաթեթները միասին) քաշն է 129,754 փութ և 7 ֆունտ: Մի և նոյն թւին տրանզիտով դուրս է տարած Կովկասից Եւրոպայ զանազան ապրանքներ 3,078 հակ, որի բրուտո քաշն է 15,070 փութ և 11 ֆունտ: 1866 թւի յունվարի 1-ից մինչև յուլիսի 1ը, կէս տարվան մէջը դուրս է տարած տրանզիտով Կովկասից Պարսկաստան զանազան ապրանքներ 16,592 հակ, որի բրուտո քաշն է 99,379 փութ և 29 ֆունտ: Մի և նոյն միջոցումը Կովկասից տրանզիտով դուրս է տարած Եւրոպայ զանազան ապրանքներ 4,571 հակ, որի բրուտո քաշն է 21,226 փութ և 12 ֆունտ:

Չարագործ Կարակոսովի մասին:

Պետերբուրգից էս ամսի 2 ին տելեգրաֆով գրում են, որ ռուսաց «Հիւսիսային փոստ» (Северная почта) անունով գաղեթը հրատարակեց Կարակոսովի մասին տեղեկութիւններ: Դա 1865 թւի վերջին կազմված Մոսկովի ծածուկ ընկերութենին է պատկանում, նմանապէս և էդ ընկերութենի խմբին, որ կոչվումէ դժոխք: Էդ ընկերութենի նպատակն է սոցիալական յեղափոխութիւն, տէրութենի փոփոխութիւն, օրինաւոր կառավարութիւնների վեր գցելը և մինչև անգամ թագաւորի սպանելը: Ընկերութիւնը յարաբերութիւններ ունի Եւրոպայի յեղափոխական կամիտեաի հետ: Դեռ չեն յայտնած էս գործի մէջ խառնված մարդկանց անունները:

Խօսերայի մասին: Պետերբուրգումը յուլիսի 13 ին հիւանդացաւ խօսերայով 29-ը մարդ, մեռաւ 67, յուլիսի 14 ին հիւանդացաւ 230, մեռաւ 70, յուլիսի 15 ին հիւանդացաւ 252, մեռաւ 66, յուլիսի 16 ին հիւանդացաւ 255, մեռաւ 54, յուլիսի 17 ին հիւանդացաւ 187, մեռաւ 44:

Կրոնշտանդ քաղաքումը մինչև յուլիսի 11-ը խօսերայով հիւանդ կար 133 մարդ: Յուլիսի 11-ին մեռաւ 15:

Կիևիումը յուլիսի 4 ին հիւանդացաւ իւրայով 90, մեռաւ 22: Յուլիսի 5 ին հիւանդացաւ 64, մեռաւ 30: Յուլիսի 6-ին հիւանդացաւ 62, մեռաւ 26: Յուլիսի 7-ին հիւանդացաւ 69, մեռաւ 34:

Կիևիի գաւառումը յուլիսի 20-ից մինչև 25-ը խօսերայով հիւանդացել է 8, մեռել է 2: Պոդոլսկի գաւառումը յուլիսի 23-ից մինչև 28-ը հիւանդացել է խօսերայով 53, մեռել է 29:

Վոլինի գաւառումը յուլիսի 11-ից մինչև 24-ը հիւանդացել է 46, մեռել է 11:

Տուրա քաղաքումը յուլիսի 7-ին 2 հիւանդ կար խօսերայով: Խօսերան երեւել է Պարիսումը:

ԱՐԵՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Պետերբուրգ, յուլիսի 20:

Կուրսը Լոնդոնի վրայ . 29 1/2 պէն
— Պարիսի վրայ . 303 սանտիմ
50/0 Լատարիյով առաջին փոխառութիւնի տոմսակները 110 1/2 մանէթ:

50/0 Լատարիյով երկրորդ փոխառութենի տոմսակները . . . 107 մ:

Ոսկին 6 մ, 70
Արծաթը 84 պրօբի 270

Թիֆլիս, օգոստոսի 6:

Բամբակի և բրդի թէ մազանդէքը թէ առուտուրը միևնոյն է ինչ որ այցեալ շաբաթ:

Շաքարը ինդիգոյ . 9 մ 80 կ — 10
— Ռսինը 10 մ 80
Արծաթը 84/0 280
— 720/0 70
Ոսկին 6 մ 80

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ:

Դուրս եկաւ Գ. Տ. Ա.-ի և Ա. Ե. աշխատասիրած ուղեւորէն Պաուլսոնի գրքին յարմարացրած «Ընթերցարան հերետիկների համար», որ պարունակում է երեսունութ 97 երես: Ծախվում է «Վ. Ճառարանի» խմբագրատանը: Գինը հասնում է առնողների համար 40 կ. է. ի դումարով առնողների համար 35 կ:

Էս գրքից ծախվում է Թիֆլիսումը նույնապէս գրախաճառ պ. Ա. Էնֆիաճեան մադաղիւումը և Բեալեան զիմապիսցա պ. Սոլոմոն վարդանեանցի մօտ: